ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու թվով 8 (ութ)

անդամներ:

Բացակա էին՝ Հ. Հարությունյանը, Ա. Աղաբեկյանը, Ա. Մելքոն-յանը, Ա. Աբրահամյանը, Վ. Վարդանյանը, Մ. Քարամյանը, Հ. Դավթյանը:

Նիստի աշխատանքներին մասնակցում էր **«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փոխնագետ Մարի Մելքոնյանը:**

Նիստի աշխատանքներին չէր մասնակցում **«Ազատական» խմբակցության գործավար Մերի Քարամյանը:**

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Արթուր Աղաբեկյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել 24-ը նոյեմբերի 2023թ. թիվ 11 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝
2.Եղեգիս համայնքի ավագանու 23/12/2022թ. թիվ 156Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
3.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,
4.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,
5.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,
6.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,
7.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,
8.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքին պատկանող, Արտաբույնք, Հորբատեղ, Հերմոն, Գողթանիկ, Վարդահովիտ, Եղեգիս, Շատին, Հորս, Քարագլուխ և Աղնջաձոր գյուղերի վարչական ղեկավարների նստավայրի գրադարանում գտնվող գրքերն և գրքերի գրադարակներն անորոշ ժամկետով համապատասխան գյուղերի դպրոցներին անհատույց օգտագործման տրամադրելու մասին,
9.Եղեգիս համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,
10.25-ը հունվարի 2023 թվականի «Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,
11.Եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին,
12.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին,
13. Եղեգիս համայնքում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման համար հողամասի ձեռքբերումը մեկ անձից գնման ընթացակարգով իրականացնելու մասին,
14.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրային հայտեր հաստատելու մասին,
15.Եղեգիս համայնքի ավագանու 20/09/2023թ. թիվ 124Ա որոշման բովանդակության մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 149Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23/12/2022Թ. ԹԻՎ 156Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Եղեգիս համայնքի ավագանու մշակույթի, երիտասարդության կրթության և սպորտի հարցերով մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի թեկնածությունը հաստատելու մասին» թիվ 156Ա որոշման բովանդակության մեջ «Վարդան Վարդանյանի» բառերը փոխարինել « Արգիշտի Հասրաթյանի » բառերով:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 150Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելուն՝

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելուն՝

1)կադաստրային ծածկագիր 10-035-0270-0017, մակերեսը 150,4179հա, որից 4,7233հա վարելահող և 145,6946հա այլ հողատեսք,

2)կադաստրային ծածկագիր 10-035-0268-0006, մակերեսը 98,9387հա, որից 5,339հա վարելահող և 93,5997հա այլ հողատեսք,

3)կադաստրային ծածկագիր 10-035-0265-0001-ից, մակերեսը 89,67219հա, որից 4,95047հա վարելահող և 84,72172հա այլ հողատեսք,

4)կադաստրային ծածկագիր 10-035-0260-0001, մակերեսը 58,5187հա, որից 0,9614հա վարելահող և 57,5573հա այլ հողատեսք,

5)կադաստրային ծածկագիր 10-035-0259-0019, մակերեսը 123,24389հա, այլ հողատեսք:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 200(երկու հարյուր) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 151Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելուն՝

կադաստրային ծածկագիր 10-029-0129-0002, մակերեսը 93,7311հա, որից 78.3011հա արոտավայր, 1,37հա վարելահող, 5,94հա խոտհարք և 8,12հա այլ հողատեսք,

կադաստրային ծածկագիր 10-029-0128-0001-ից, մակերեսը 114,278հա, որից 2,7644հա վարելահող, և 111,5136հա արոտավայր:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 200 (երկու հարյուր) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 152Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր՝ 10-029-0125-0012 , մակերեսը՝ 0,73 հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 120 (մեկ հարյուր քսան) տոկոսը:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 8 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 153Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-041-0005-0100, մակերեսը 0,27331հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 200 (երկու հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 154Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. [redacted]/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 155Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՐՏԱԲՈՒՅՆՔ, ՀՈՐԲԱՏԵՂ, ՀԵՐՄՈՆ, ԳՈՂԹԱՆԻԿ, ՎԱՐԴԱՀՈՎԻՏ, ԵՂԵԳԻՍ, ՇԱՏԻՆ, ՀՈՐՍ, ՔԱՐԱԳԼՈՒԽ ԵՎ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՍՏԱՎԱՅՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՐՔԵՐԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱԿՆԵՐՆ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ</u>/

Համայնքների խոշորացումից հետո, տարեց-տարի նվազել է գրադարաններից օգտվող ընթերցասեր քաղաքացիների քանակը, ինչի հետևանքով համայնքապետարանի հաստիքացուցակում տեղի են ունեցել փոփոխություններ: Որոշ գրադարանավարների հաստիքներ կրճատվել են և դրանց պարտականությունները կատարել են մշակութային միջոցառումների կազմակերպիչները, որն ըստ էության իրեն չի արդարացրել: Միջոցառումների սակավության և մշակույթի տների անգործության պատճառով, ընթացքում այդ հաստիքները ևս կրճատվել են:

Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք, Հորբատեղ, Հերմոն, Գողթանիկ,Վարդահովիտ, Հորս, Եղեգիս, Շատին, Քարագլուխ և Աղնջաձոր գյուղերի վարչական ղեկավարների նստավայրի գրադարանները տարիներ շարունակ չեն ծառայել իրենց նպատակին և չեն ծառայում, հնարավորչի եղել գրքերը տրամադրել ընթերցասեր բնակչությանը և դպրոցական երեխաներին, ինչն աշխարհընկալման և գիտելիքների ձեռք բերման դերում բացասական է անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք, Հորբատեղ, Հերմոն, Գողթանիկ, Վարդահովիտ, Հորս, Եղեգիս, Շատին, Քարագլուխ և

Աղնջաձոր գյուղերի վարչական ղեկավարների նստավայրի գրադարանները և գրադարակները համաձայն հաստատված գույքացուցակի, անհատույց, անորոշ ժամկետով օգտագործման հանձնել Եղեգիս համայնքի վերոնշյալ գյուղերի դպրոցներին:

2.Սույն որոշման պահանջները կատարել որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում և որոշման պահանջների կատարումը հանձնարարել Եղեգիս համայնքի ղեկավարի 1-ին տեղակալին և նշված գյուղերի վարչական ղեկավարներին:
3.Որոշման գործողությունը տարածվում է մինչև, անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարի պահանջով գրքերը գրադարաններին վերադարձնելը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 156Ա/

Լսեցին
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Եղեգիս համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 157Ա/

Լսեցին
25-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի 25 հունվարի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման0 մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 07 խումբ 01 դաս 03 ծրագիր 51՝ բժշկական սարքեր և սարքավորումների ձեռքբերում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4639-ընթացիկ դրամաշնորհներ հոդվածից 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,

համապատասխանաբար ավելացնել

ա.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 ծրագիր 60՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) հոդվածին՝ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 05 դաս 01 ծրագիր 51՝ ճանապարհային տրանսպորտ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4512-սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող) հոդվածին՝ հոդվածին 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,

գ.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 08 խումբ 02 դաս 04 ծրագիր 51՝ այլ մշակութային կազմակերպություններ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4269-հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածին 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Կողմ- 7 Դեմ- 1 Ձեռնպահ- 0

Գ. Մարտիրոսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 158Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 16/11/2023թ. թիվ255Ա որոշումը

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, և ստորև ներկայացված գույքերը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Քանակը /հատ/	Արժեքը	Գումարը/դրամ/
1.	Տպիչ CANON MF3010	1	165000	165000
2.	Տպիչ HP LAZERJET 15W	1	90000	90000
3.	Էլեկտրական տաքացուցիչ	1	6500	6500
4.	Ձայնային համակարգ 8880	1	110000	110000
5.	Աթոռ	10	14600	146000
6.	Պրոցեսոր G3900 500 GB 4GB	1	128500	128500
7.	Մոնիտոր LG	1	107900	107900
8.	Պրոցեսոր i7512 SSD 16 GB	1	280000	280000
9	Մոնիտոր DELL S2421	1	123500	123500
10	UPS	1	30000	30000
11.	Ստեղնաշար GENUS	3	6500	19500
12.	Դյուրակիր համակարգիչ LENOVO IDEPAD	1	335000	335000
13.	Պրոցեսոր DU AL CORE	1	170000	170000

	G6405,4GB RAM			
14.	Հովհար MYSTERY 2445	1	10000	10000
15.	Ստեղնաշար GENUS101	1	6000	6000

Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի խմելու ջրի համակարգի գույքագրման վերաբերյալ՝

Հ/Հ	Բնակավայրի անվանում	Չափի միավոր	Երկարություն	Գումար /դրամ/
1	Վարդահովիտ	մ	1770	12 200 000
	Ընդամենը	**մ**	**1770**	**12 200 000**

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ- 1

Ս. Մարտիրոսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 159Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության օգտագործման տրամադրելուն՝

1.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 0,5 հա մակերեսով խոտհարքը և «Սատանի քար» կոչվող հանդամասում 0,5հա խոտհարքը

վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Սերգեյ Սամսոնի Գրիգորյանին:

2.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Սատանի քար» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Վահե Իլիչի Օհանյանին:

3.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Արամայիս Սամսոնի Գրիգորյանին:

4.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Սատանի քար» կոչվող հանդամասում գտնվող 0,2հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Մարիամ Արմենակի Դանիելյանին:

5.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Ցորենանոց» կոչվող հանդամասում գտնվող 0,5հա մակերեսով արոտավայրը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Արազ Ռուբիկի Ավանեսյանին:

6.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 0,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Արմենակ Սամվելի Դանիելյանին:

7.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Սամվել Արմենակի Դանիելյանին:

8.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն բնակավայրի բնակիչ Արշավիլ Պիլիպոսի Գրիգորյանին:

9.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 0,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն բնակավայրի բնակիչ Համբարձում Սերգեյի Գրիգորյանին:

10.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Սատանի քար» կոչվող հանդամասում գտնվող 2հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն բնակավայրի բնակիչ Դավիթ Սասնիկի Հակոբյանին:

11.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Ցորենանոց» կոչվող հանդամասում գտնվող 0,2հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Արևիկ Արմենակի Դանիելյանին:

12.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 1հա և 0,5հա մակերեսներով խոտհարքը և «Սատանի քար» կոչվող հանդամասում գտնվող 1հա խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Վարդան Վլադիմիրի Ստեփանյանին:

13.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Ցորենանոց» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով արոտավայրը և «Վիշկա» կոչվող հանդամասում գտնվող 0,5հա խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Իգոր Յագուարի Դանիելյանին:

14.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմանների «Գետիկվանքի տարածք» կոչվող հանդամասում գտնվող 0,8հա մակերեսով արոտավայրը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Դավիթ Վաղարշակի Բաղալյանին:

15.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 0,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Թելման Պարգևի Ստեփանյանին:

16.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Արշամ Յուրիկի Եղյանին:
17.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 0,8հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Կարապետ Անուշավանի Մանուկյանին:
18.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Արևհատ Մառլենի Ավագյանին:
19.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Հովիվների փոս» կոչվող հանդամասում գտնվող 2,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Շիրակ Անդրանիկի Նիկողոսյանին:
20.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Վահագն Տիգրանի Եղյանին:
21.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Կարտոֆիլի փոս» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Մեխակ Հայկի Հայրապետյանին:
22.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Ժորա Վարդգեսի Ոսկանյանին:
23.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Մելքոն Ինյաթի Բունիաթյանին:
24.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Հակոբ Ալֆրեդի Հովհաննիսյանին:
25.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 1,5հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Սերգեյ Արթուրի Ստեփանյանին:
26.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի «Աղավնաձորի սար» կոչվող հանդամասում գտնվող 2հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Թառաթումբ գյուղի բնակիչ Սեյրան Նորիկի Գրիգորյանին:
27.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագիր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ- 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 160Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 42-րդ կետերի, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման նպատակով ստորև ներկայացված քաղաքացուն պատկանող հողամասը ձեռք բերել համայնքի բյուջեի հաշվին՝ որպես համայնքային սեփականություն՝ Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող Շատին գյուղի բնակիչ Հովիկ Մամիկոնի Մակարյանին սեփականության իրավունքով պատկանող 10-035-0003-0004 կադաստրային ծածկագրով, 0,068հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ձեռք բերել համայնքի բյուջեի հաշվին՝ որպես համայնքային սեփականություն՝ 1 570 000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար) ՀՀդրամի չափով:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 161Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքի կողմից զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ որոշման կից հավելվածով ներկայացվող հայտերը:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 162Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20/09/2023Թ. ԹԻՎ 124Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 20-ի «Քաղաքացի Սուսաննա Թորգոմի Բեգլարյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 124Ա որոշման բովանդակության մեջ «0.125հա» թիվը փոխարինել «0,125 հա արոտավայր և 0,01824հա այլ հողատեսք» թվերով և բառերով:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Նիստն արձանագրեց՝ Աննա Դանիելյանը

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **1407583**:
Տպեք կամ պահպանեք այն:

21.11.2023թ.

11-դ հերթ